ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2004

ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿ

Հայաստանի Հանրապետության պետական պարտքը 2004 թվականի հունիսի 30-ի դրությամբ կազմել է 617.09 մլրդ. դրամ կամ 1,154.55 մլն ԱՄՆ դոլար:

	2002թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2003թ. հունիսի 30-ի դրությամբ		2003թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2004թ. հունիսի 30-ի դրությամբ	
	մլրդ. դրամ	մլն. ԱՄՆ դոլար	*մլրդ. դրամ*	մլն. ԱՄՆ դոլար	*մլրդ. դրամ*	մլն. ԱՄՆ դոլար	*մլրդ. դրամ*	մլն. ԱՄՆ դոլար
Պետական պարտք	640.62	1,095.28	671.69	1,148.59	664.43	1,173.91	617.09	1,154.55
այդ թվում՝								
Ներքին պարտք	40.81	69.78	41.05	70.19	43.13	76.21	45.03	84.25
Արտաքին պարտք	599.80	1,025.50	630.65	1,078.40	621.30	1,097.70	572.06	1,070.30

Հաշվարկները կատարված են ելնելով համապատասխան ժամանակաշրջանի վերջի դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից սահմանված ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի փոխարժեքից:

ՆԵՐՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ

2004 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշներն ունեն հետևյալ տեսքը.

- ներքին պետական պարտքի անվանական արժեքը կազմել է 45,030.01 մլն. դրամ, որից պետական կարճաժամկետ պարտատոմսեր (ՊԿՊ)՝ 17,059.31 մլն դրամ և միջին ժամկետայնության պարտատոմսեր (ՄԺՊ)՝ 27,970.70 մլն դրամ,
- պետական պարտատոմսերի գծով դեֆիցիտի ֆինանսավորումը՝ 3,000.9 մլն դրամ,
- միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 11.2428 %,
- պետական պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 484 օր (ՊԿՊ-եր՝ 135 օր և ՄԺՊ-եր՝ 698 օր):

Աղյուսակ 1

2004 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքը բնութագրող ցուցանիշները

(մլն դրամ)

	առ 30.06.2003թ.	առ 31.12.2003թ.	առ 30.06.2004թ.
Ներքին պետական պարտքը	41,046.28	43,132.30	45,030.01
որից՝			
կարճաժամկետ պարտատոմսեր	21,400.00	22,300.00	17,059.31
միջին ժամկետայնության պարտատոմսեր	19,646.28	20,832.30	27,970.70
Ներքին պետական պարտքի ժամկետայնությունը (օր)	253	354	484
որից՝			
կարճաժամկետ պարտատոմսեր	147	183	135
միջին ժամկետայնության պարտատոմսեր	374	538	698
Ներքին պետական պարտքի եկամտաբերությունը (%)	16.0543	13.7163	11.2428
որից՝			
կարճաժամկետ պարտատոմսեր	14.4911	11.4296	8.8750
միջին ժամկետայնության պարտատոմսեր	17.7570	16.1642	12.6871

Գծապատկեր 1

2004 թվականի հունիսի 30-ի դրությամբ ներքին պետական պարտքի կառուցվածքը



ԱՌԱՋՆԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2004 թվականի I կիսամյակում տեղի է ունեցել պետական պարտատոմսերի 17 թողարկում, որից 11-ը ՊԿՊ-երի, իսկ 6-ը՝ ՄԺՊ-երի: Թողարկումների ընդհանուր ծավալը կազմել է 19.40 մլրդ դրամ, որն ամբողջությամբ տեղաբաշխվել է: Պետական պարտատոմսերի թողարկման ծավալում ՊԿՊ-երը կազմել են 5.7 մլրդ դրամ (29.4%), իսկ ՄԺՊ-երը՝ 13.7 մլրդ դրամ (70.6%): ՊԿՊ-երի մեկ թողարկման միջին ծավալը կազմել է 518.2 մլն դրամ, իսկ ՄԺՊ-երինը՝ 2,283.3 մլն դրամ:

Պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը թողարկման ծավալը գերազանցել է 2.70 անգամ և կազմել 52.43 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակահատվածում կատարված տեղաբաշխումների միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 1291 օր, միջին կշռված եկամտաբերությունը՝ 8,3079% (տե՛ս աղ. 2).:

Աղյուսակ 2

2004 թվականի I կիսամյակում պետական պարտատոմսերի եկամտաբերության և ժամկետայնության ցուցանիշները ըստ ամիսների

	Նվազագույն եկամտաբերություն	Առավելագույն եկամտաբերություն	Միջին կշռված եկամտաբերություն	Տեղաբաշխման միջին կշռված օր
Հունվար	7.1000	7.6200	7.5335	364
Փետրվար	5.4999	10.4800	8.4249	1046
Մարտ	5.4980	9.9900	8.4150	1180
Ապրիլ	5.5000	9.8000	8.5614	1402
Մայիս	5.5700	9.4899	8.7714	1578
Հունիս	4.7800	8.8888	7.7649	1383
I կիսամյակ	4.7800	10.4800	8.3079	1291

Աղյուսակ 3

2004 թվականի I կիսամյակում շուկայի մասնակիցների ձեռք բերած պարտատոմսերի տեսակարար կշիռները տեղաբաշխման ծավալի մեջ

(տոկոսներով)

	Գործակալներ	Դիլերներ	ԳՊ	Ընդամենը
Հունվար	78.00	12.00	10.00	100.00
Փետրվար	65.85	32.46	1.69	100.00
Մարտ	71.61	28.16	0.23	100.00
Ապրիլ	63.41	35.88	0.71	100.00
Մայիս	55.02	44.80	0.18	100.00
Հունիս	71.93	27.64	0.43	100.00
I կիսամյակ	66.86	32.29	0.85	100.00

Պահանջարկի 84.05%-ը (44.07 մլրդ դրամ) ձևավորվել է գործակալների և դիլերների սեփական միջոցների, իսկ 15.95%-ը (8.36 մլրդ դրամ)՝ ներդրողների հաշվին:

Գծապատկեր 2

Պետական պարտատոմսերի շուկայում ներդրողների կառուցվածքը 2004 թվականի հունիսի 25-ի դրությամբ



ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ ՇՈՒԿԱ

2004 թվականի I կիսամյակում երկրորդային շուկայում.

- կատարվել է 402 գործարք,
- գործարքների ընդհանուր ծավալը կազմել է 21,724.5 մլն դրամ, որից.
  - առևտրային բանկերի կողմից 18,216.3 մլն դրամ (ՊԿՊ՝ 9,494.4 մլն, ՄԺՊ՝ 8,721.9 մլն դրամ),

- ԿԲ-ի կողմից կատարվել է 3,508.2 մլն դրամ ծավալով ՄԺՊ-երի գործարքներ,
- միջին կշռված եկամտաբերությունը կազմել է 7.4118 %,
- միջին կշռված ժամկետայնությունը՝ 886 օր, իսկ առանց ԿԲ գործարքների՝ 733 օր,
- միջին օրական ծավալը՝ 173.8 մլն դրամ,
- գործարքների միջին օրական քանակը՝ 3,
- երկրորդային շուկայում իրականացված գործարքների եկամտաբերությունը տատանվել է 2.50%-ից 14.00% միջակայքում:

Գծապատկեր 3

2004 թվականի I կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործառնությունները ըստ ժամկետայնության



Գծապատկեր 4

2004 թվականի I կիսամյակում երկրորդային շուկայում կատարված գործարքների եկամտաբերության և ժամկետայնության փոխադարձ կապը



ԳԱՆՁԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՀԱՌՈՒ

2004թ. առաջին կիսամյակում Գանձապետական պահառուի կողմից իրականացված գործառնություններն ունեցել են հետևյալ տեսքը.

- մասնակցել է կազմակերպված բոլոր 11 թողարկումներին,
- ներդրման ծավալը կազմել է 164.709.000 դրամ,
- միջինը մեկ աճուրդի ժամանակ ներդրվել է 14.973.545 դրամ,
- միջինը մեկ աճուրդին մասնակցել է 9 ներդրող,
- մարվել է 435.897.000 դրամի պարտատոմս,
- տեղաբաշխված ՊԿՊ-երի 2.89 % ձեռք է բերվել ԳՊ-ի միջոցով,
- դիլեր բանկեր է փոխանցվել 16.902.000 դրամի պարտատոմս,
- ընդամենը շրջանառության մեջ է եղել 505.900.000 դրամի պարտատոմս (տես գծ. 5),

Գծապատկեր 5

Շրջանառության մեջ գտնվող պարտատոմսերի ծավալը



- դեպո հաշիվների քանակը կազմել է 671, որոնցից 9-ը բացվել են հաշվետու ժամանակահատվածում (տես գծ. 6),

Գծապատկեր 6

Դեպո հաշիվների դինամիկան



- շրջանառության մեջ եղած պարտատոմսերի միջին կշռված ժամկետայնությունը կազմել է 134 օր,
- միջինը մեկ ներդրողի կողմից ներդրման ծավալը կազմել է 2.422.191 դրամ,
- միջինը մեկ աճուրդում մեկ ներդրողի ներդրման ծավալը կազմել է 1.630.782 դրամ,
- միջինը մեկ ներդրողը մասնակցել է 1.5 թողարկման:

Աղյուսակ 4

ԳՊ-ի կողմից 2004թ-ի առաջին կիսամյակի ընթացքում իրականացրած գործառնությունները

	Մարում	Սպասարկում	Ընդամենը	Կեղաբաշխում	Տեղաբաշխվածի կշիռը (%)	Աճուրդների քանակը	Մեկ աճուրդի ներդրման միջին ծավալը
27-39 շաբաթ	7.093.706	556.294	7.650.000	0	0	0	0
40-52 շաբաթ	379.316.312	48.930.688	428.247.000	164.709.000	100.00	11	14.973.545
Ընդամենը	386.410.018	49.486.982	435.897.000	164.709.000	100.00	11	14.973.545

Աղյուսակ 5

30.06.2004թ. դրությամբ ԳՊ-ի միջոցով շրջանառության մեջ գտնվող ՊԿՊ-եր

	40-52 շաբաթ	Ընդամենը
Անվանական արժեք	505,900,000	505,900,000
Գնման գին	465,521,048	465,521,048
Սպասարկում	40,378,952	40,378,952
Միջին եկամտաբերություն	9.04%	9.04%
Կշիռը	100.00%	100.00%

Գծապատկեր 7

Ներդրումներն ըստ ժամկետայնության



ԱՐՏԱՔԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔ

2004թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պետական պարտքը կազմել է 1,070.3 մլն ԱՄՆ դոլար, այդ թվում՝

- ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորությունները 858.9 մլն ԱՄՆ դոլար (80.2%),
- ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունները 211.4 մլն ԱՄՆ դոլար (19.8%):

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ՀՀ արտաքին պետական պարտքը նվազել է 0.8%-ով, իսկ 2003թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ՝ 2.5%-ով (տես գծ. 8):

Գծապատկեր 8

ՀՀ արտաքին պետական պարտքի և նրա բաղադրիչների դինամիկան



2004թ. առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության անունից ստորագրվել են երկու նոր վարկային համաձայնագրեր.

- Կրթության որակի և համապատասխանության վարկային ծրագիր (վարկատու՝ Միջազգային Զարգացման Գործակալություն, վարկառու՝ ՀՀ կառավարություն): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ 13.2 մլն SDR,
- Համայնքային ջրամատակարարման և ջրահեռացման վարկային ծրագիր (վարկատու՝ Միջազգային Զարգացման Գործակալություն, վարկառու՝ ՀՀ

կառավարություն): Վարկային համաձայնագրի ընդհանուր գումարը՝ 15.4 մլն SDR:

Միաժամանակ, Միջազգային Զարգացման Գործակալության կողմից Հայաստանի Հանրապետությանը տրամադրված Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության վարկային ծրագրի ընդհանուր գումարը ավելացվել է 1.2 մլն SDR-ով՝ կազմելով 11.9 մլն SDR:

2004թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության արտաքին պարտավորությունների 90.1%-ը կազմել են բազմակողմանի վարկատուներից ստացված վարկային միջոցները, իսկ մնացած 9.9%-ը՝ երկկողմանի վարկատուների կողմից տրամադրված վարկերը (տես գծ. 9):

Գծապատկեր 9

ՀՀ արտաքին պետական պարտքի կառուցվածքն ըստ վարկատուների 2004թ. հունիսի 30-ի դրությամբ



2004թ. առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ արտաքին պետական պարտավորությունների գծով մասհանվել է 47.7 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտաքին պարտավորությունների սպասարկմանը ուղղվել է 65.5 մլն ԱՄՆ դոլար (տես աղ. 6), այդ թվում՝

- տոկոսավճարների գծով՝ 4.9 մլն ԱՄՆ դոլար,
- հիմնական գումարի մարման գծով 60.6 մլն ԱՄՆ դոլար, որից՝

- 31.0 մլն ԱՄՆ դոլարը «գույք-պարտքի դիմաց» բանաձևի շրջանակներում Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական վարկերի մարում,
- 8.4 մլն ԱՄՆ դոլարը Եվրամիության կողմից տրամադրված 28 մլն Եվրո վարկի գծով վաղաժամկետ մարում:

Աղյուսակ 6

ՀՀ արտաքին պետական պարտքի սպասարկումը և արտաքին վարկային միջոցների մասհանումները 2004թ. առաջին կիսամյակի ընթացքում

	Մասհանում	*Սպասարկում*		
		ընդամենը	*այդ թվում*	
			մարում	*տոկոսավճար*
Ընդամենը	**47.650**	**65.467**	**60.564**	**4.903**
այդ թվում՝				
1. ՀՀ կառավարության և նրա կողմից տրամադրված արտաքին երաշխիքների գծով արտաքին պարտավորություններ	**33.193**	**49.784**	**45.506**	**4.278**
որից՝				
Բազմակողմանի վարկատուներ	*24.106*	*16.531*	*13.023*	*3.508*
Համաշխարհային Բանկ	21.574	3.591	0.661	2.930
Գյուղ. Զարգացման Միջազգային Հիմնադրամ	2.436	0.135	-	0.135
Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկ	0.096	4.313	3.970	0.343
Եվրամիության	-	8.492	8.392	0.100
Երկկողմանի վարկատուներ	*9.087*	*33.253*	*32.483*	*0.770*
Ռուսաստանի Դաշնություն	-	31.009	31.009[1]	-
ԱՄՆ	-	2.024	1.474	0.550
Գերմանիա (KfW)	9.087	0.198	-	0.198
Ֆրանսիա	-	0.016	-	0.016
Ճապոնիա	-	0.006	-	0.006
2. ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտավորություններ	**14.457**	**15.683**	**15.058**	**0.625**
որից՝				
Բազմակողմանի վարկատուներ	*14.457*	*15.683*	*15.058*	*0.625*
Արժույթի Միջազգային Հիմնադրամ	14.457	15.683	15.058	0.625

[1] «գույք-պարտքի դիմաց» բանաձևի շրջանակներում Ռուսաստանի Դաշնության կողմից տրամադրված պետական վարկերի մարում:

2004թ. առաջին կիսամյակի ընթացքում արտաքին պետական պարտքի մեծությունը 2003թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ նվազել է շուրջ 27.4 մլն ԱՄՆ դոլարով, որը պայմանավորված է եղել.

- մասհանում – մարում տարբերությամբ՝ 47.2%-ը,
- արժութային տատանումներով՝ 52.8%-ը:

2004թ. առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի Հանրապետության արտաքին պարտավորությունների սպասարկման գծով բոլոր վճարումները կատարվել են ժամանակին և պատշաճ կերպով: